Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, ԳԻՄ Նախագահ

Ն. Խ. Սարիբեկյան

«05» 03 2018թ.

ԿԱՐԳ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ՀԵՌԱՑՄԱՆ /ԱԶԱՏՄԱՆ/, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգով սահմանվում են բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր /բակալավրի և մագիստրոսի/ իրականացնող Ավանդական բժշկության համալսարանի ուսանողների հաջորդ կուրս փոխադրման, հեռացման /ազատման/ և վերականգնման ընդհանուր պայմանները /առկա ուսուցման ձև/:

1.2. Ուսումնական պլանների փոփոխության պատճառով առաջացած առարկայական տարբերությունները համարվում են ակադեմիական պարտքեր, որոնք ուսանողը պետք է հանձնի ռեկտորի հրամանով հաստատված անհատական ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

1.3. Առարկայական տարբերություն է համարվում ուսումնառած պլանում բացակայող առարկան կամ որևէ առարկայից 25 % և ավելի կրեդիտների տարբերությունը:

1.4. Ակադեմիական անբավարար առաջադիմություն է համարվում քննաշրջանում 3 և ավելի առարկաներից կամ 1 առարկայից 3 անգամ՝ անբավարար՝ գնահատական ստանալը:

1.5. Համալսարանի ռեկտորը վերականգնվող ուսանողին ազատում է նախկինում ուսումնասիրած և համապատասխան կրեդիտներ հավաքած առանձին առարկաների ուսումնական պարապմունքներից:

2. Ուսանողների հաջորդ կուրս փոխադրում

2.1. Ուսանողների հաջորդ կուրս փոխադրումն իրականացվում է ուսումնական պլանով նախատեսված ստուգարքները, քննությունները և ուսումնաարտադրական պրակտիկաները հանձնելուց հետո:

2.2. Ուսանողների հաջորդ կուրս փոխադրումը կատարվում է ռեկտորի հրամանով՝ ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ: Ուսանողի ստուգարքային գրքույկի և անձնական թերթիկի մեջ դեկանը նշում է կատարում հաջորդ կուրս փոխադրելու մասին, դրվում է կնիք և դեկանի ստորագրությունը:

2.3. Հաջորդ կուրս պայմանականորեն փոխադրվում են նաև այն ուսանողները, ովքեր ունեն առնվազն 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքեր՝ մինչև հաջորդ կիսամյակի 3-րդ շաբաթվա ավարտը վերահանձնելու պայմանով:

2.4. Ակադեմիական պարտքերը սահմանված ժամկետում չվերահանձնելու դեպքում, դեկանի ներկայացմամբ և ռեկտորի հրամանով, ուսանողը հեռացվում է համալսարանից: Անհրաժեշտության դեպքում, դեկանի առաջարկությամբ, ռեկտորի որոշմամբ, կարող է կազմվել քննական հանձնաժողով: Ֆակուլտետի դեկանը կարող է սահմանել ակադեմիական պարտքերի վերահանձնման անհատական ժամանակացույց:

2.5. Քննաշրջանին հարգելի պատճառով չմասնակցած կամ ակադեմիական ցածր առաջադիմություն ունեցող ուսանողի գրավոր դիմումի համաձայն, բացառության կարգով, ուսանողը կարող է մնալ նույն կուրսում՝ ուսումնառությունը կրկնելու նպատակով, որը ձևակերպվում է ռեկտորի հրամանով:

3. Ուսանողների հեռացում /ազատում/

3.1. Ուսանողը ***հեռացվում է*** համալսարանից.

ա/ ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակի արդյունքներով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու, դեպքում /բացառությամբ սույն կարգի 3.10 կետով նախատեսված դեպքերի/,

բ/ համալսարանի ներքին կարգուկանոնը կամ ուսումնական կարգապահությունը խախտելու դեպքում,

գ/ համալսարանի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում:

3.2. Ուսանողի հեռացումը համալսարանից կատարվում է ռեկտորի հրամանով՝ ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ:

3.3. Ուսանողը ***ազատվում է*** համալսարանից.

ա/ իր դիմումի համաձայն,

բ/ այլ բուհ տեղափոխվելու դեպքում,

3.4. Համալսարանից ուսանողի ազատման հրաման իր դիմումի համաձայն չի կարող տրվել, եթե նա ենթակա է հեռացման, համաձայն սույն կարգի 3.1 կետի ենթակետերով նախատեսված դեպքերի:

3.5. Ուսանողի ուսումնառությունն ***ընդհատվում է***:

ա/ ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում,

բ/ առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու դեպքում,

գ/ հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում,

դ/ սոցիալական անապահով վիճակում գտնվելու պատճառով վճարունակ չլինելու դեպքում,

3.6. Քննաշրջանի ընթացքում ստուգարքներին և քննություններին հարգելի պատճառով /բժշկի տեղեկանք և այլն/ չներկայացած ուսանողներին թույլատրվում է պարտքը հանձնել ակադեմիական պարտքերի մարման ընթացքում՝ անվճար հիմունքներով:

3.7. Ակադեմիական պարտքերի վերջնաժամկետ է սահմանվում ընթացիկ կիսամյակի 3-րդ շաբաթվա վերջը:

3.8. Սույն կարգի 3.1-ի ա/ ենթակետով նախատեսված դեպքում համալսարանից հեռացման հրամանները տրվում են քննաշրջանի, ակադեմիական պարտքերի մարման արդյունքների ամփոփումից հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին ուսանողը նախապես տեղեկացվում է:

3.9. Համալսարանից հեռացման /ազատման/ դեպքում ուսանողի դիմումի համաձայն, 3 աշխատանքային օրվա ընթացքում, նրան տրվում է հեռացման /ազատման/ հրամանի քաղվածք, ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը: Ավարտական վկայականի պատճենը պահվում է ուսանողի գործում:

3.10. Ընթացիկ անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին իրավունք է վերապահվում մինչև ավարտական ուսումնական տարվա սկզբին լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը, վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով դրանք:

3.11. Սույն կարգի 3.5 կետի համաձայն ուսումնառությունն ընդհատած ուսանողները շարունակում են ուսանողական իրավունքները մինչև ուսումնառության ընդհատումը ունեցող կարգավիճակի պահպանմամբ:

4.1 Ուսանողների վերականգնում

4.1. Ուսանողական իրավունքների վերականգնումը թույլատրվում է սկսած 1-ին կուրսի 2-րդ կիսամյակից:

4.2. Ուսանողական իրավունքների վերականգնման դիմումները ներկայացվում են կիսամյակի ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթների ընթացքում: Վերականգնման դիմումին կցվում է ակադեմիական տեղեկանքը կամ ստուգման գրքույկի պատճենը:

4.3. Համալսարանից հեռացված/ազատված/ ուսանողները վերականգնվում են ռեկտորի հրամանով:

4.4. Համալսարանի ռեկտորը քննարկում է ուսանողի վերականգնման դիմումը, որոշում նրա ուսումնառության շարունակման կուրսը և մյուս պայմանները կամ հիմավորում է մերժելու մասին իր որոշումը:

4.5. Առաջացած առարկայական տարբերությունների և ակադեմիական պարտքերի մարման համար համալսարանի ռեկտորի կողմից սահմանվում է ժամկետ, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

4.6. Սույն կարգի 3.5 կետով ուսումնառությունն ընդհատած ուսանողներն ուսումը շարունակում են այն պահից, որից այն ընդհատել են, անկախ առաջացած ծրագրային տարբերություններից:

4.7. Ուսանողների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո:

4.8. Համալսարանից հեռացված /ազատված/ ուսանողները վերականգնվում են այն կիսամյակում, որից նրանք հեռացվել /ազատվել/ են, եթե վերականգնման պահին առարկայական անհամապատասխանություններով պայմանավորված կրեդիտների զումարային քանակը չի գերազանցում 20 կրեդիտը: 20 կրեդիտը գերազանցելու դեպքում ուսանողին առաջարկվում է վերականգնվել ավելի ցածր կիսամյակում, որի համար առարկայական անհամապատասխանությունների սույն կետում նշված պահանջը բավարարում է, բացառությամբ 1-ին կուրսի 1-ին կիսամյակի:

4.9. Համալսարանից հեռացված /ազատված/ ուսանողները վերականգնում են իրենց ուսանողական իրավունքները առնվազն մեկ կիսամյակ հետո:

4.10. Համալսարանից հեռացված /ազատված/ ուսնողները կարող են վերականգնել ուսանողական իրավունքները պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում:

4.11. Ըստ մասնագիտությունների չհավատարմագրված բուհերից հեռացված /ազատված/ ուսանողների վերականգնում չի թույլատրվում:

4.12. Վերականգնված ուսանողների անձնական գործում պահվում են ուսանողի դիմումը, ակադեմիական տեղեկանքը, վերականգնման մասին հրամանի քաղվածք, բուհի հետ կնքված պայամագիրը, միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության

ավարտական վկայականը, համալսարանի հետ կնքված պայմանագիրը և զին. փաստաթուղթը:

4.13. Վերականգնված ուսանողի վրա տարածվում են համալսարանում գործող բոլոր նորմատիվային կարգերը:

5. Ուսանողներին ակադեմիական արձակուրդ տրամադրելու ընթացակարգը

5.1. Ակադեմիական արձակուրդ տրվում է մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառող ուսանողներին:

5.2. Ակադեմիական արձակուրդի տևողությունը 1-2 օրացուցային տարի է:

5.3. Ակադեմիական արձակուրդ տալու մասին որոշումը կայացնում է համալսարանի ռեկտորը: Հրամանագրման համար հիմք է ծառայում.

- Առողջական վիճակի մասին բժշկի համապատասխան տեղեկանքը և ուսանողի դիմումը:
- Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու մասին զինկոմիսարիատի կողմից տրված ծանուցագիրը և ուսանողի դիմումը:
- Սոցիալական ծանր վիճակի մասին ուսանողի դիմումը:

5.4. Տարկետումից վերադարձող ուսանողը վերականգնվում է դիմումի համաձայն, ռեկտորի հրամանագրով: Ուսանողի հետ կնքվում է նոր պայմանագիր՝ առանց ուսման վարձի փոփոխության: